

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

Վ Ե Պ Ը

Ս. ԱՐԵՂԵԱՆԻ



Վնութիւնս—Մեր հին կեանքի բարեկաշտութեան արդիւնքը միայն վանքերը չեն եղել, այլ և ճգնութիւնը: Դրա պատկերն ևս տեսնում ենք վէպի մէջ: Իշխանը հրաժարւում է աշխարհից և գնում սարերը, անտառները՝ ճգնութիւն անելու: Նա հետը տանում է մի փոքրաւոր ծառայ, մէկ էլ իւր ձին (7-րդ, 53. 58—61): Քառասուն տարի ճգնութիւն է անում Մովսարում, մի այրի մէջ. ծերանում, ուժից ընկնում է, այնպէս որ տեղից շարժուելու համար ծառան պէտք է թևերի տակն ընկնէր և բարձրացնէր նրան դուրս հանելու համար: Աշխարհը նրա համար արդէն մեռած է. բայց այնուամենայնիւ մի բանով դեռ նա աշխարհից կտրուել չի կարողանում: Նրա սիրտը տանջւում է, որ իւր հայրենիքը վտանգի մէջ է, թշնամին հկել զուան առել է, և իր եղբոր Դաւնիկ Ուրիկն օգնութեան կարօտ է: Աւաղ ինքը չի կարող օգնել. նրան աւրի, ինձնից քեզի օգնութիւն չիլի. էս քառասուն տարի ա, իմ ձեռքս սուր ու թուր չեմ առել. Աստուծու հետ էլ էնպէս պայման եմ արել, որ էլ ստուց ետ էլ չառնեմ, քանի որ չեմ մահացել: Եւ նա բաւականանում է քաջալերելով տղային և կռուի համար խրատներ տալով: Բայց տղան մենակ կռուող չէ. թշնամիների ձեռից նա նեղն է ընկնում և կեանքն անգամ վտանքի մէջ է: Ինչ անէ ճգնաւոր իշխանը. նրա սիրտը կտրաւում է, օգնէ՞ արդեօք իւր եղբոր որդուն թշնամու դէմ, թէ իւր ուխտը պահէ: Մերունու հին դիւցազնական արիւնը եռում է. նա ծառայի օգնութեամբ նստում է ձին և վճռում է հայրենիքի համար կռիւ դնալ: Իւր երկրի և ժողովրդի սիրուց նոյն իսկ տեղն է՝ գալիս ոյժը, այնպէս որ ճանապարհին բարտու ծառն արմատահան է ա-

նում և ուսին դրած հասնում է Դաւնիկ Որբիկին: «Տղայ, ասաւ, էս քառասուն տարի ա, ես սուր թուր չեմ բանցրէ, էլ չեմ բանցնի. Աստծուն ըխտադրութիւն եմ արել. ես էս ծառով կը ժողվիմ կը բերեմ, դու թրով կտրեմ, հնձի: Ես կը ծորեմ, դու ծորթփէ:» Եւ այսպէս երկուսով Զարգում են թշնամու զօրքը: Կընդունէ՞ արդեօք Աստուած այս ճղնաւոր իշխանի ուխտադրութիւնը: Ժողովրդի կարծիքով՝ այո՛, նա արիւն չէ թափել, այլ միայն «ծորել է» թշնամիներին¹⁾:

Ժամ անել եւ մոռնիների պաշտամունքը:—Բարեպաշտական մի ուրիշ արտայայտութիւն է և «ժամ անելը»: Վէպի մէջ «ժամի» երկու տեսակը կայ, եղանակն ժամն և բնութեանը:

Յոսման ժամը մի հասարակական բարեպաշտութեան դործ է, որ անում են գիւղացիք: Եփում են եղանակն ճաշ, հարիսայ չորս կանթէն պղինձներով, շառաւիղ լինկ, ու հանում դնում են կալը: Պատարագից յետոյ երէցները տիրացուներով դալիս օրհնում են և ապա բոլորը միասին վայելում ճաշը (1-ն, 133. 3-րդ, 28. 90 հտ.): Դա հասարակական մատակ է: Ե՛րբ տարածում էին կամ կարկուտ տեղայ, բերքերուն քննաէ. երբ մարախն ու թրթուրը բոյնն ու կանաչը զօսացնեն. երբ երաշտութիւն լինի. երբ ցաւ ու մահ պատահեն մարդոց և անասնոց. երբ երկրաշարժ լինի, և ինչ որ պատահի երկրին, այն որ մարդոց ըրածը չէ, Աստուծոյ ց ա ս ու մ ն կը համարին և այդ ցասման դէմն առնելու համար՝ ամբողջ հասարակութիւնը միանալով մատակ են մորթում և ժամ անում: Յաճախ նոյն ժամի ժամանակ և ց ա ս-

¹⁾ Այս միենոյն պատմութիւնը 1-ն, 163 պատմուած է Քեռի Թորոսի համար, որ Դաւթի և Մարա Տեղքի կուռի ժամանակ վրայ է հասնում մի բարդի ծառ ուսին դրած: Վէպը կայնիւր էր ձոր ու գլխին, ու ընդունը ձոր ու մէջ կուռ կէննէն: Որն որ կը փախնի վեր կենէ, Դաւթ կը բռնայ.—Քեռի, դու ձորէ, ես ձորթփիմ:—Վէպի այս բացատրութիւնը ծորել և ծորթփել բառերի համար՝ կապած ձոր բառի հետ, ստեղծուած է միայն հնչիւնների պատահական նմանութիւնից: Ծիշտ նշանակութիւնը իշխանի ասածն է հնձի համար: Այս իմաստով գտնում ենք և մի ժողովրդական երգի մէջ (Քնար Հայկական, եր. 183) խոտհնձի համար ասած.

«Համարձման երկուշարթին
Առայ գիւղին ու զգերնդին,
Ընկայ ծովուն՝ ծով յալման,
Ծորեցի, ծորթփեցի,
Մանրիկ մանրիկ խորմեցի», և այլն:

մ ա ն իս ա չ են տնկում քաղաքից կամ գիւղից դուրս արտերի վրայ գտնուած բլուրներէ վրայ (Գրոց ու Բրոց. եր. 117 հտ.), Յասման ժամի նպատակն է, հասկանալի է, Աստուծու ցասումն իջեցնել զոհարեութեամբ: Դա մի շատ հին սովորութիւն է, որ հեթանոսութեան ժամանակ կատարուել է շատ ազգերի մէջ, և որ այժմ մեզնում կատարում է յանուն քրիստոնէական Աստուծուն:

Այս ցասման ժամը մի քանի պատմութեանքների մէջ (7-րդ, 64 հտ.) դարձած է մեռելահաց: Իշխան մարդ է մեռնում, և նրա համար պատարագ են անում, ու պատարագատանը, այսինքն ննջեցեալի տանը, ժմեծ մարդաշափ պտուկներ դրած թոնրի վրայ հարիսայ են եփում, որպէս զի ուտողներն ասեն՝ «Աստուած ննջեցեալի հոգին լուսաւորի»:

Մենք ուրիշ տեղ (Volks Glaube, եր. 20 հտն.) գրել ենք այս հոգեհացի համար, որ մեռելների կամ նախնեաց պաշտամունքի մնացորդ է և մի շատ տարածուած սովորութիւն է հայոց մէջ: Մհերն ևս իւր փակուելուց առաջ քառասուն պատարագ է անել տալիս. «Սամայա տուն քանի մ' որ մեռած չեն, բիրադին պատարագ էրաւ» (3-րդ, 147): Ուրեմն նա, վերջին ժառանգը, հոգում է իւր նախնեաց հոգիների մասին և կատարում իւր որդիական պարտքը:

Նախնեաց պաշտամունքի, իսկապէս հաւատքի, մի մնացորդ է և այն, որ Մհերը Բաղդասարի գերեզմանի վրայ, ինչպէս տեսանք, աղօթք է անում և եկեղեցի շինում (3-րդ, 144, 146), և որ նա իւր կեանքի վերջում շարունակ գիմում է իւր բանցիւոց, որոնք գերեզմանի միջից պատասխան ու խորհուրդ են տալիս նրան: Նա հերթով կանգնում է Ձէնով Յովանի, Դաւթի և Քանդութի գերեզմանների վրայ, լալիս ու ձայն տալիս նրանց, որ վեր կենան իրեն մի ճար անեն. որովհետեւ իւր անմահութեամբ հանդերձ աշխարհքից անմասն է մնացել. աշխարհքը չի վերցնում իրեն: Կանգնում է նախ հօրեղբօր գերեզմանին, կանչում. «Քէրախութ խրօթալէր, վիբ իլի»: Գերեզմանից ձայն է դուրս գալիս. «Գնանք ու հօր մօտ, ևս բան չունիմ»: Գալիս է հօր գերեզմանի վրայ:

«Քէրբիկ, վիբ իլի. խէր, վիբ իլի,

Սասման տնէն բերար իմ իլի.

Քէրբիկ, վիբ իլի. խէրբիկ, վիբ իլի,

Աշխրքի հրեսին բերար իմ մնացի»:

Հօր գերեզմանից ձայն եկաւ, ասաց.

«Որդի՛ վիճչիս անեմ,

Դացիբ մեջալն ի ձեռնէս.

Գացիր մեջալն ի ձեռնէս,
Թափիր մազերն երեսէս:

Ասաց. «Մէրեկ, վեր իլի. խէրեկ, վեր իլի.
Քու անուշ հոգուն փափագ մնացի.
Քու անուշ խօսքերուդ կարօտ մնացի.
Էն մենակ աշխարհ կացիս:

Ասաց. «Գնահ Հալաբայ քաղաք.
Քու հաց թխուկ է.
Քու կերակուր եփուկ է:

Ասաց. «Հալաբայ քաղաք փայ չունիմ.
Իմ բար ու փայ ծախիր իմ,
Իմ խօսք ու խարար տուիր իմ,
Հալաբայ քաղաք չեմ երթամ:

Մհերն էնքան էլաց, էլ ձէն չելաւ խօր գերեզմէն: Դոր
գնաց վար մօր գերեզմանին. ասաց.

«Մէրեկ, վիչխ անեմ,
Ասօր ձի Սասմայ քաղաքէն
Բերար ի խանած:

Ասաց. «Որդի, վիչխ անեմ,
Գացիր դաւրանը ձեռնէս.
Գացիր դաւրանը ձեռնէս,
Թափիր մազերն ի զլիսէս:

Ասաց. «Մէրեկ, վեր իլի. մէրեկ, վեր իլի.
Ես եմ քու ծծի որդին,
Եթ ամիս ինձի պահիր ես վեար քու սրտին.
Շատ տանջանք ես քաշի վեար աստնուորին.
Շատ ման եմ եկի աշխարհ, շիւար եմ ման եկի.
Չտեսայ քու պէս քաղցրիկ մէրիկ վեար աշխարհին:

Ասաց. «Բոլ ի կան գաս վեր աշխարհին,
Մեր վերջը մեռնիլն իս:

Ասաց. «Մեռնիլ չունիմ վեր աշխարհին.
Անժառանգ անմահ իմ:

Ասաց. «Գնահ Վանայ քաղաք,
Քու հաց թխուկ է,
Քու հմակ եփուկ է
Մինչև օրն դատաստան:

Ոչ մի բան այնպէս կենդանի չի ներկայացնում անցելոց
հոգիներէ հաւատքը և մեռելներէ ու կենդանի սէրն ու յարաբե-

քութիւնը, որքան այս սրտառուէ խօսակցութիւնը որդու և ծնող-
ների մէջ, որոնք երկուսն ևս անճար են: Մէկը կենդանի և ան-
մահ է մարմնով, բայց անճար. նա այլ ևս աշխարհի մարդ չէ.
երկիրը նրան չի վերցնում: Միւսը մեռած է մարմնով, մազն ե-
րեսից ու գլխից թափած, իշխանութիւնը ձեռից ընկած մի կմախք
գերեզմանի մէջ, բայց կենդանի է հոգւով, և այդ հոգին այն աշ-
խարհից ձայն է տալիս և հոգում իւր որդու համար: Դա հո-
գեւոր անմահութիւնն է, որ ըմբռնուած է կէս քրիստո-
նէական և կէս հեթանոսական հաւատքով, որի մասին այստեղ
բացատրութիւններ տալ չենք ուզում, քանի որ մեր վերևում յի-
շած գրքի մէջ մանրամասն գրած ունենք այդ մասին:

Մարդ յիշում է անմահ և անժառանգ Արտաւազդին ու իւր
հայր Արտաշէսին, մեր Դաւթի ու Մհերի նախապատկերներին:
Բայց որքան տարբերութիւն: Հեթանոս Արտաւազդը մեռած հօրը
կշտամբում է, որ աշխարհն իւր հետ տարաւ և թէ ինքը աւերակ-
ների վրայ ինչպէս պիտի թաղաւորի, հօր հոգին գերեզմանից ա-
նիծում է նրան, որ Մասսայ քաջքը կապեն նրան Ազատ Մասի-
սում, և այնտեղ մնայ ու լոյս չտեսնի, իսկ այստեղ քրիստոնեայ
հայրը, ճիշտ է, դարձեալ ուրիշ առթիւ անիծում է որդուն, որ
անմահ և անժառանգ մնայ, և այդ հայրապետ անէծքը շատ
զօրաւոր է ու դարձեալ ճշտութեամբ կատարւում է, բայց չի
ոչնչացնում հօր և որդու սիրոյ կապը, նրանց քնքուշ յարաբերու-
թիւնը, որդին հօր հոգու համար է հոգում, իսկ հայրն ու մայրը
որդուն մի ճար անելու համար միայն ուղարկում են Վանայ քա-
րայրը:

Վերևում գրանից արդէն երևում է թէ ինչպէս է մեր ժողո-
վուրդը հասկանում անմահութիւնն այն աշխարհում: Մհերն ևս
անմահ է, բայց դա հրաշք է, որ հօր անէծքից է տուաճանում: Նա
վերջի վերջոյ պիտի դուրս գայ իւր քարայրից և «շատ արիւնք»
թափի ու «հայոց հաւատքի», միևնոյն է թէ հայ ազգի համար
«նահատակութիւն», ճիշտ ինչպէս հեթանոս հայերը, ըստ Եզնիկի,
հաւատում էին, թէ Արտաւազդը մի օր պիտի ելնի և հայոց թա-
ղաւորութիւն հաստատի: Մհերի անմահութիւնն ուրեմն դարձեալ
մի վերջ ունի: Բայց կայ այն աշխարհում մի ուրիշ անմահու-
թիւն ևս, որ դարձեալ որդու հօր յարաբերութիւնն է ցոյց տալիս:
Դա սերնդով անմահութիւնն է: Ո՞ր մենք կանք աշխար-
հի վրայ, պիտի մեռնենք համա որ մենք մեռնենք, մեր տղան որ
սաղ լինի, մենք էլի սաղ կը յիշուինք. մեր տղին որ ըլնի, մեր
տան-անուն չի կորուսի (3-րդ, 83). Եւ այս հասկացողութիւնը
որ նոյնպէս մեռելների պաշտամունքի հետևանք է, այնքան զօրեղ

է, որ Մհերն աւելի լաւ է համարում ինքը մեռնի, միայն թէ որդի ունենայ, քան թէ ապրի անորդի:

Յիշենք նախնեաց, հոգու և սրբերի պաշտամունքի հետ կապուած մի երկու հաւատալիք ևս, որ կան վէպի մէջ, և որոնք շատ տարածուած են և ուրիշ ազգերի վէպի մէջ, Դա ապագան, հերոսների վիճակը, նրանց սպառնացող վտանգը ևայլն նախատեսելը կամ գուշակելն է երազով, աստղով ևայլն:

Իբրև գուշակութիւն համարւում են այն երազները, որոնց մէջ հրեշտակները, սրբերը կամ նախնեաց հոգիները երևում են և յայտնում ապագայ իրերի վիճակը. կամ եթէ իրենք չեն երևում, երազը նրանց ազդմամբ է գալիս: Երազով գուշակութիւնը շատ սովորական է: Երազով մինչև այժմ մեզնում ս. Սարգսի տօնին՝ ս. Սարգսի հրամանով իմացւում է ապագայ նշանածի ով լինելը, — որ Հոգիի աստուածութեան հին հաւատալիքի մնացորդ է: Այսպէս երազ է տեսնում գերման վէպի մէջ Գուդրունը իւր նշանածի մասին, իբրև մի բազէ թռչում է իւր թևի վրայ: Երազով նշանւում են քրդական Սիամանդոն և խճազաբէն: Իսկ մեր վէպի մէջ Պղնձէ քաղաքի թագաւորի աղջիկը գրում է Սանասարին. «Երազով զբէ տեսիւր եմ. արի ինձի մո. ընձի շատ դիւր կը դաս դու: Ծովեայ խնումը գիշերն երազով հրաման է ստանում, որ գնայ ծովափ այնտեղ իւր մուրազն առնելու համար (Զեռ. Մոկաց Բ.): Երազով յաճախ վէպերի մէջ մայրն իմանում է իւր որդոց սպառնացող վտանգը, ինչպէս Սանասարի և Արամելիքի մայրը, որին երազ է գալիս ս. Կարապետը (1-ն, 138), ինչպէս և Մսրայ մելքի մայրը, որ երազով իմանում է թէ որդին պիտի սպանուի (7-րդ, 18): Այսպիսի երազով գուշակութիւնն ընդհանրապէս մեր վէպի մէջ շատ սիրելի մի եղանակ է (7-րդ, 51. 9-րդ, 377. 389. 3-րդ, 126. 1-ն, 159) որ սովորաբար մի խորհրդաւոր, սիմբոլական նշանով է լինում, ինչպէս երևում են վառուղ ու մարող ճրագներ, հերոսների ձիանք՝ որ իրար հետ կռւում են, հերոսը վտանգի մէջ, կարէ կարասի մէջ ընկած, հերոսի աստղը խաւարած, իսկ թշնամունքը պայծառ և այլն:

Մեր վէպի մէջ գուշակութեան մի առանձին եղանակ է և աստղին նայելը, որ նոյնպէս ժողովրդական հին հաւատքի մի մնացորդ է և կապուած հոգիների պաշտամունքի հետ: Մարդկանց հոգիներն ընդհանրապէս աստղերի հետ մօտիկ յարաբերութեան մէջ են, ամեն մարդ մի աստղ ունի, որ ազդում է նրա ճակատագրի վրայ, և աստղի վիճակը ցոյց է տալիս հերոսի վիճակը: Աստղերը երևում են արդար մարդոց: Այսպէս Բաղդասարը որ նեղն է ընկնում, Սանասարը նայում տեսնում է, որ «Բաղդասար»

րի աստղը նուազիր ի՞նչ, և նա խելոյն օգնութեան է համոռն իւր եղբորը: Այս եղանակը յաճախ կրկնուած է մեր վէպի մէջ (8-րդ, 9. 12. 41. 3-րդ, 55. 125): Աստղին երբեմն փոխանակուած է մատանին, խկապէս մատանու ակը, որ և հերթաթիւերի մէջ սովորական է (3-րդ, 39. 77):

Բաւական և նոյն իսկ շատ համարելով այսքանը վէպի մէջ երևան եկած հեթանոսական-քրիստոնէական հաւատալիքների և կրօնական հասկացողութիւնների մասին՝ աւելորդ չենք համարում այստեղ մի քանի խօսքով մէջ բերել թէ ինչպիսի դադափար ունի մեր ժողովուրդը հայազգի և այլազգիների և նրանց յարաբերութիւնների մասին: Մենք դարձեալ համառօտ կանցնենք, որովհետև մեր նպատակը չէ առանձին մանրամասն ուսումնասիրութիւն անել այս մասին:

Հայ և այլազգի—ժողովուրդն իւր հաւատքն իրրև ճշմարիտ հաւատ կոչուած է աստուած պաշտօն թիւն կամ խաչապաշտօն թիւն, իսկ այլազգիների հաւատքն իրրև սուտ հաւատ դնում է իրրև կռապաշտօն թիւն: Թէպէտ և օտարների համար, օրինակ Մսրում, Խլաթում, յիշուած են մզկիթ, մինարէ, մոլլա, ախմէդ, բայց մահմեդականութեան մասին խօսք չկայ, այլ միայն կայ աստուածապաշտ, խաչապաշտ, քրիստոնեայ, հայ-քրիստոնեայ և կռապաշտ կամ չաստուած պաշտող: Հայը օտարներից, որոնք տաճիկ են անուանուում, տարբերուում է զըլ-խաւորապէս այս կողմով. օտարները կուռք են պաշտում: Այսպէս կռապաշտ են և Բաղդատու խալիֆան, և Խանդութ Խանուսի հայրն ու եղբայրը, և Խանդութին ուզող քառասուն փահլանը, այլ և Հադրբեշանի թագաւորն ու իւր ազնիկը և ուրիշները (1-ն. 137 հտ. 3-րդ, 14. 61 հտ. 123. 130. 7-րդ, 48 հտ. 9-րդ, 404 հտն.):

Կուռք կամ չաստուածը սակայն չի պատկերացուում իրրև անշունչ իր. նա էլ զօրութիւն ունի, բայց չէար թշնամուներ, այսինքն աստանայինն է այդ զօրութիւնը: Շէնոի յողաց, չար թշնամին մտաւ ընդունց կռքերի միջին, մատաղ ուզեցին: Եւ կուռքերը մարդկային զոհ են պահանջում (3-րդ. 63): Երբ Դաւիթը Հադրբեշանի թագաւորի աղջկայ նաժիշտներին տանում է, աղջիկը դիմում է կռքերին. «Կռքեր, մարդերն աղջիկները փախցուցին. կարող էք դարձնէք, բերէք: «Կռքերուց ձէն էլաւ, ասին. աստուածապաշտ մարդեր չաստուածապաշտ մարդերու աղջիկներ տարան: Քաղաք բիրադի ձիաւորուան, թրեր քաշեցին ընկան յետները (3-րդ, 131): Մեծ կռուքը մի ամիս շարունակ Աբամիլքին տանջում է, ինչպէս մի հրեշտակ կայրն (1-ն, 145.

3-րդ, 19): Սակայն և այնպէս՝ այդ կոքերը ծաղրի առարկայ են նոյն իսկ Աբամելիքի համար, որ մտնելով «կոքատուն» ջարդում է ըստ կոքերը, «ու առաւ զարծթներ լցեց իր մալուքի փէշ, ու բերեց առեց իւր մամուն», և ապա դուրս գալով ասում է. «Որն որ իմ Աստուած կը պաշտայ՝ թող զայ իմ թրի տակով անցնի»։ Ամենքն էլ ասում են. «Դու որ Աստուածն որ կը պաշտես, մենք էլ էն աստուած կը պաշտենք (1-ն, 145 հտն. 3-րդ, 19 հտն.)»։

Աստուածապաշտն ուրեմն պարտք է համարում կոտորածներին իւր հաւատին դարձնել։ Ամենքը սակայն հեշտութեամբ չեն հաւատ փոխում։ Նրանք յաճախ հաստատ են մնում իրենց հաւատին։ Դաւթի ծաղրին թէ իմ ասած բանը, որ է Հայր մեր, որ դուք ասէք, Աստուծու անունը տաք, ամեն ժամանակ առանց հաց ուտելու կը կշտանաք, — փահլանները լրջութեամբ պատասխանում են. «Մենք չենք թողնել մեր շատուած, քու աստծու անուն տալ»։ Հաւատի կամ կրօնի կոխ, սակայն, առանձնապէս չի երևում հայերի կողմից դէպի տաճիկները. այլ մեծ մասամբ միայն արհամարհանք։ Նոյնն է, կարելի է ասել, և այլազգիների կողմից դէպի հայերը։ Եթէ Մարայ մեղքի մարդիկը Մարաթուկայ սուրբ Աստուածածինն աւերում են, այդ ոչ այնքան կրօնական ատելութեան համար է, որքան աւարառութեան համար։ Երկու կողմից էլ մի տեսակ հաշտուած են այն զաղապարի հետ թէ հայն աստուածապաշտ պիտի լինի, իսկ այլազգին կոտորած, ամէն մէկն իւր հաւատին։ Բայց այդ չի նշանակում թէ կրօնական զգացմունքը սառն է իւր կողմի համար ևս, և կրօնն առանձին նշանակութիւն չունի ազգերի համար։

Կրօնն ամենից առաջ իրարուց տարբերում է հայ և այլազգի և մեծ խորթութիւն է դնում այդ երկուսի մէջ։ Հայը տաճիկից խորշում է. Դաւիթը Մարայ մեղքի կնոջ ծիծը չի ուտում. ինչու, — որովհետեւ լինի խայի, մենք տաճիկ չնք, բացատրում է Մարայ մեղքը (3-րդ, 83. 8-րդ, 21)։ Հայը խորշում է այլազգիներից զլիաւորապէս խնամութեան համար։ Երբ կոտորած թաղաւորը խաչապաշտի աղջիկն ուզում է, հայրն ասում է. «Ես խաչապաշտ, դու կոտորած»։ Բնի բան ա, որ ես իմ աղջիկ տամ քեզ։ Նա աւելի լաւ է համարում կոտել իրենից զօրեղ թագաւորի հետ, քան թէ իւր աղջիկը տալ։ Բայց նեղն ընկած ժամանակ, մանաւանդ երբ աղջիկն իւր յօժար կամքով դնում է, տալիս է (3-րդ, 60)։ Դաւիթը խանդութիւն ուզող փահլաններին ասում է. «Որ դուք Աստծու անունն չէք տայ՝ ես չեմ թողնի Աստծու պաշտող դուք առնէք. ես տ'առնեմ»։ խանդութն էլ, որ քրիստոնեայ է, իւր կող-

մից Դաւթին է ուղում առնել ոչ թէ նրա ջանքերուն, կտրու-
նութեանը թամաւ անելով՝ այլ նրա աստօնն (3-րդ, 123)։

Հայը ոչ միայն այլազգուն ազնիկ չի տալիս, այլ և նրանից
աղջիկ առնել չի ուղում։ Մենք քրիստոնեայ ենք, մեզի կը սա-
ղի դանք էդ կռապաշտի աղջիկն առնենք։ Վերի, որդի, քե քրիս-
տոնէի աղջիկ առնենք, կռապաշտի աղջիկ որ ուզենք, մեր գլուխը
զալմաղալ կընկնի։ Եւ երբ Դաւիթը Մարայ էլի մէջ զլաթցի Քան-
դութին նշան է դնում. «Էհ, որդի,—ասում է Քեռի Թորոսը, զնա-
ցիր մեր գլուխը գցիր զալմաղալի տակը» (7-րդ, 64. 68)։ Բայց
կայ և դրա հակառակ կարծիք, որ ոչ թէ Քեռի Թորոսի պէս փոր-
ձուած ծերունիներինն է, այլ տաքարին երիտասարդներինը.
«Որ մենք կռապաշտներից չտանենք հայացնենք, թեքենք մեր
հաւատի վրէն՝ ինչով պէտք է մեր Սասունը հաստատենք։ Մենք
մեր սուրբ Աստուածը կանչելով մեր թրի զօռով պէտք է կռա-
պաշտները դարձնենք, Սասուն քաղաքը շինենք»։

Այլազգիներն ևս իրենց կողմից նոյն ձևով են վարում հայե-
րի հետ։ Նրանք միայն շջանի երկիւղից են աղջիկ տալիս հայե-
րին, և աշխատում են նրանց ձեռից ազատել իրենցից փախցրած
աղջիկներին. և նրանցից աղջիկ տանել։

Այսպէս բռնի հաւատափոխութեան մէջ կարևոր տեղ բռնում
է միայն մէկմէկուց աղջիկ խլելն ու իրենց հաւատին դարձնելը,
որ յափշտակողի կողմից մեծ կտրուութիւն է համարւում, իսկ
աղջկայ տիրոջ համար մեծ նախատինք։

Ազգերի և կրօնների պահպանութեան համար ոյժը, անձնա-
կան քաջութիւնը խաղում է առաջին դերը, այն էլ զլիսաւորապէս
իշխանի քաջութիւնը, որովհետև հասարակ ժողովուրդը գրեթէ
նշանակութիւն չունի։ Իսմիլ Քանուկը Մարայ մեղքի մահից յետոյ
մեծ հոգսի մէջ է, մտածելով թէ որդի չունի, որ «եւնի իրենց
ազգին տէրութիւն անի, իրենք շիւար չմնան»։ (3-րդ, 81)։ Բայց
այդ որդին պէտք է զօրեղի ազգից լինի, և ոչ հասարակ մարդ։
Եւ երբ նա Մհերից զօրեղ որդի է ունենում, այնպիսի տղայ, որ
երբ շլափին հասնի, աւատան աշխարհում նրա դէմը կանգնող
չլինի, Մհերն է այժմ մեծ մտառանջութեան մէջ ընկնում. «Հէյ
վախ, հէյ վախ, հսի ինչիս իմ տուն քանդեցի, իմ աչքեր կուրա-
ցուցի. հայ ու ճրագ անցուցի, տաճկի ճրագ վառեցի։ Նրա
համար Հայոց աստղը խաւարել է, և մտածում է, թէ ինչ անի,
որ հայի ճրագը չանցնի։ Նրան պէտք է մի տղայ զօրեղ, որ ելնի
մեր հայի ճրագը կպցնի... Ելնի էն այլազգու
ճրագը փչի, մեր ազգի վրայ չկտրճանայ։ Եւ
ձեռում է Սասման տան ճրագ Դաւիթը, որի համար

ասում են թշնամիք. «Մէկ տղայ էլի խայոց ազգին, դմե ճրագ անցուց» (3-րդ, 81 հտն. 7-րդ, 4 հտն. 8-րդ, 20):

Հայ ազգի հոգացողութեանը միաժամանակ կապուած է և տեղական, ցեղական հայրենասիրութիւնը, կամ ճիշտն ասած՝ ընդարձակ մտքով իսկական հայրենասիրութիւն չկայ, այլ միայն հայ հաւատի սէր, որ փոխանակում է ընդհանուր հայրենասիրութեան, և տեղական հայութեան սէր, տեղական հայրենիք, որ է Սասունը: Վէպի հերոսները հոգ են տանում, որ «Սասման տան անունը չկորչի»։ Նրանք գրեթէ ոչ մի անգամ ընդհանուր հայ հայրենիքի, կամ ուրիշ կողմերի հայերի համար չեն հոգում: Բայց, դրա փոխանակ մեծ սիրով կապուած են իրենց տեղական հայրենիքին, նրա հոգ ու ջրին: Նրանք, ճիշտ է, յաճախ հեռանում են Սասունից, օտար երկիրներ թափառում, ուր մեծ քաջութիւններ են անում: Երբեք ամուսնանում են և երկար կամ կարճ ժամանակով ապրում, բայց վերջը միշտ յիշում են իրենց երկիրը և գալիս հասնում իրենց «թախտին» (3-րդ, 59): Ոչ մի բան չի կապում նրանց օտար երկրի հետ, ոչ ամուսնութիւն, ոչ ձեռք բերած նոր երկիրներ և ոչ հարստութիւն: Խանդութիւն ուզում է Դաւթին իւր քաղաքում պահել: «Չէ, ասում է Դաւիթ, ես էլ Սասմայ քաղաքի տէրն եմ. չէ, տ'իրթանք Սասմայ քաղաք»... Ինչ կար չկար, բոլոր ծախեց. միւս՝ քարուան կապեց, եկաւ տախ Սասմայ քաղաք» (2-րդ, 46): Եւ շատ հասկանալի է այս. ինչքան էլ օտար տեղերում յաջողութիւն ունենայ մարդ, «օտար երկիրը մարդուն տուն չի դառնալ», ասում է վէպը (3-րդ, 66): Մեռնելիս էլ մարդ ցանկանում է իւր հայրենիքում իւրայինների մօտ թաղուել: Գոհար Խաթունը մեռնում է Սասունից դուրս. մարդը՝ Մհերը մօտին չէ, բայց գիր է գրում դնում իւր ձեռի մէջ թէ՛ «Բեզլի կը խնդրեմ, ինչ ժամանակ դու գաս ինձ տեսես, ինձի տանես Սասուն Խանդութ խաթնի կուշտ թաղես. էս կռապաշտ հողի մէջ չթողնես»: Եւ Մհեր կատարում է նրա կտակը (3-րդ, 147):

Տեղական հայրենասիրութեան հետ գտնում ենք և ցեղական սէր, երբեք և լայն իմաստով ազգասիրութիւն: Սասնոյ ճետերն իրար հօտ առնում են հեռուից. միշտ իրար պահում են նեղ ժամանակին: Ձէնով Յովանն և ուրիշները նախազգալով մերձաւորի վտանգաւոր դրութիւնը՝ վեր են թռչում և առանց բռնի կորցնելու օգնութեան հասնում: Մհերն իւր կնոջը ու թագաւորութիւնը թողնում, շտապում է գալ պաշտպանել իւր ծերունի հօրեղբորը, որին նեղում են Կոզբաղնի թոռները (2-րդ, 32. 3-րդ, 125. 138): Հարազատի ձայնը լսելով հերոսն այլ ևս աչ ու երկիւղ չունի. և այդ ձայնը կտրում անցնում է լեռներ ու դաշտեր:

Մանուկ Մհերը բանդում փակուած՝ լսում է իրեն տնծանօթ հօրեղոր ձայնը, ու կործանում պատերն ու դուրս դալիս: «Ձէնիկ մ՝ կրգէր. չեմ գիտի յարևելն էր, թէ յարևմուտն էր. չեմ գիտի հարաւայ էր, թէ հիւսիսայ էր»: և այդ ձայնը «մէջ հիւսիսայ էր, մէջ հարաւայ էր. մէջ յարևմուտ էր, մէջ յարևելն էր»:- Ինչպէս ամպի որոտ՝ ամբողջ տարածութիւնը լցնում է այդ ձայնը, որ միայն նրա համար է ստեղծուած, որ կտրի անցնի ամեն հեռաւորութիւն և իրայիններին կոչ անի՝ իւր ցեղի մարդու արեան վրէժն առնելու համար (6-րդ, 56. 3-րդ, 50, 130):

Այսպիսի տոմային կամ գերդաստանի անդամները սիրոյ արտայայտութիւններ շատ կան վէպի մէջ. բայց աւելի լայն ազդասիրութիւն կամ հայասիրութիւն շատ չենք գտնում: Արդարև վէպի մէջ կան մի քանի դէպքեր, ուր տեսնում ենք՝ հայերն իրար աւելի կապուած են, օտարութեան մէջ իրար մօտ են իջկանում, փոանդի ժամանակ իրար պահում, ընդհանրապէս աւելի բարեկամարար վերաբերում դէպի միմեանց քան դէպի օտարները, ուրախանում են, երբ տեսնում են Սասնոյ դիւցազններին, որովհետև նրանք հայ են,—բայց այդ ամենը, թէպէտ և մի ընդհանուր կապող զգացմունք կայ, դեռ ազդասիրութիւն չի բառի ընդարձակ մտքով: Այս կողմից ևս զօրեղ զգացմունք տեսնում ենք դարձեալ տեղական սասունցի ժողովրդի մէջ, և յատկապէս մի զգացմունք, որ, ինչպէս միջին դարերում սովորական է, կապուած է տեղական իշխանական տոհմի կամ հարստութեան հետ: Արամելիք—Սասնաբըր մեռնում է, Մարամելիքը նրա երեխաներին տանում է, շօթ տարի Սասուն սուգ մնաց Արամելիքի մեռնելուց ետև: Եւ ինչպիսի սուգ. «գեղացիք ասեցին.—Քեռի թորոս, մեր տղեկներ հալւորան, ու մեր աղջկատիք պտուան. թէ դու գինսս թէ մեր եօթ տարի սուգ պահելով մեր Արամելիք կը սաղնայ, եօթ տարի լէ աւլի կը պահենք» (1-ն, 149): Դա ընդհանուր սուգն է:

Բայց ոչ մի բան այնպէս զօրեղ կերպով չի արտայայտում ժողովրդի կապուած լինելը դէպի իւր իշխանները, որքան օտարութեան մէջ աշխատող համստ ջուշահի անձնական սուգը: «Ջուշահը հինած կէնէր. հինած կէնէր ու կիլէր. հինածի կէս սև էր, կէս սիպտակ»: Երբ հարցնում են. «Յժրի մէկ սև կըհինես, մէկ սիպտակ ու կիլաս հետ», գործարարը պատասխանում է. «Ես Սասունայ եմ, Մհերին ըռնեցին, թալին հորու մէջ, էն սպով մէկ սև կը հինեմ, մէկ սիպտակ ու կիլամ»: Ահա իսկական անկեղծ զգացմունքը: Բայց գործարարը պէտք է ասէր. «Ես հայ

եմք... և այն ժամանակ մենք կունենայինք ընդարձակ ազգասիրութիւն:

Հայրենասիրութեան զգացմունքի հետ միաժամանակ զոյու-
թիւն ունի և զգացմունք դէպի օտարները. այլազգիների հետ
շփուելով և նրանց հետ ունեցած յարաբերութիւնները պարզելով
է որ ազգը ինքնաճանաչութեան է հասնում, և նրա մէջ ծնւում
ու զարգանում է իր առանձին միութեան ու հայրենասիրութեան
զգացմունքը: Մեր վէպի մէջ հայոց վերաբերմունքը դէպի այլազ-
գիները շատ բնականօրէն՝ թշնամական է ընդհանրապէս: Դրա
ամենազօրեղ արտայայտութիւնն այն է, որ տաճկին չպիտի թող-
նել որ հայի վրայ կտրճանայ. նրա ճճազը պիտի փչել: «Որդի,
հապտ մարդ թշնամուն սմիլ կը թողնի», ահա թէ ինչ է պատաս-
խանում փերուհի Յովանը երիտասարդ Դաւթին, երբ վերջինս
հարցնում է թէ ինչու սպանեցիր: Բայց Զէնով Յովանն սպա-
նել էր այն թշնամիներին, որոնց կեանքն իրենց էր բաշխել Դա-
ւիթ. կը նշանակէ թշնամուն անխնայ սպանելը միայն չէ իշխում:
Մերուհու փորձառութիւնն ասում է, թէ թշնամուն մարդ սաղ
չպիտի թողնի, բայց երիտասարդը վեհանձն է: Եւ մեր վէպի
մէջ կան այդպիսի վեհանձնութեան շատ հրաշալի պատկերներ:
Կարելի է ասել ոչ մի անգամ մեր դիւցազնիւրը նոյն իսկ թշնա-
միներէից անմեղ, անպարտ արիւն չեն թափում. միայն Մհեր իւր
հօր մահուան վրէժն աննելիս թաց ու չոր չի հարցնում: Իսկ
Դաւիթը յաճախ իրեն հետ կռուող և իրեն ֆուսող թշնամիներին
էլ ներում է. նա մեծահոգի է վերին աստիճանի:

Մերուհի Յովանը սակայն իր կողմից իրաւունք ունէր ա-
սելու թէ մարդ թշնամուն սաղ չպիտի թողնի. նա իւր երկարա-
մեայ փորձից գիտէ որ երկու ազգերի յարաբերութեան մէջ
վեհանձնութիւն երևում է միայն հայի կողմից. տաճիկը զրեթէ
միշտ ցածահոգի է, փոքրանձն. նա սիրում է թալան, արիւն.
չի խնայում և կոյսերին ու հարսներին. մօր ձեռքից մանուկնե-
րին խլում է, կամ կոտորում կամ գերի տանում. չէն երկիրը նա
աւերում է, և ինչ որ իւր հետ տանել չի կարող՝ կործանման է
ենթարկում: Խնայել ասածը չկայ նրա գազանային բնաւորութեան
մէջ: Եւ այս բոլորն անում է նա մեծ մասամբ ստոր միջոցնե-
րով, խարէութեամբ: Նրա հերոսն անգամ պատրաստ է քնած տե-
ղը սպանել իւր հակառակորդին: Եւ ի՞նչ, միթէ չափազանց ան-
զգուշութիւն չէ այսպիսի թշնամուն խնայելը: Հայը խօ ինքը
յարձակում չի գործում. նա միայն պաշտպանւում է իրեն վրայ
անիրաւ տեղը յարձակուողներից: Նա գիտէ, պէտք է որոշէ թըշ-
նամիներին մէջ անմեղներին, նրանց չպիտի դիպչի. բայց կան

թշնամիներին մէջ և այնպիսիները, որոնց ոչ մի կերպ չպիտի խնայել, ինչպէս Դաւիթը Մարամեղքի մարդկանց, եթէ հնար լինէր, մաղին անգամ չէր դիպչիլ, բայց իրեն Մարայմեղքի վերաբերութեամբ նա իւր «հայր հաստակողութիւնն» է բանեցնում:

«Մայրիկ, այդ աղգը հաստակող աղգ է. մեր գլխուն բայց պիտի լինի... նրանք բալայ են», ասում է Մարայմեղքն իւր մօրը, երբ Դաւիթը նրա ծիծը չի ուտում: Եւ Դաւիթն իւր մանկական խաղերի ժամանակ սպանում է տանկի երեխաներ. Մարայմեղքը պատրաստ է սպանելու մանուկ Դաւիթին, բայց մայրը Մհերի յիշատակի համար հակառակում է ասելով թէ երեխայ է, խելքը բան չի կարում: «Երեխայ չի, խելքը հասնում է. ամա հաստակող է, դիտմամբ է սպանում», պատասխանում է Մարայմեղքը: Փսկ երբ մայրը խնդրում է նրան իւր հետ խաղի տանել Դաւիթին, ասում է. «Մայրիկ, ինձ հետ կըտանեմ. բայց ինքը հաստակող աղգ է, վախենամ մէկ պատիժ բերի. մեր գլուխը: Եւ իրօք, «Դաւիթն էր, զինք խաստակող աղգ էր, մտաւ նստաւ հոլոուն, էնկանըդար աղաչեց աղբէր, չլսաւ» (3-րդ, 87): Հայ աղգն ուրեմն հաստակող աղգ է և մասնաւորապէս Դաւիթի ցեղը, — այս կարծիքն ունին ըստ վէպի օտարները և նոյն իսկ հայերը մեր ազգի մասին: Բայց թնչ է հասկացում այդ բառով:

Հաստակողութիւնը, դա յամառութիւն է, բայց յամառութիւն ազգութեան վերաբերմամբ: Հայն իբրև հաստակող ազգ՝ հաստատ է իւր ազգին ու հաւատին. այդ պատճառով և նրա ամեն մի արարքը օտարների աչքին փուշ է. «բալայ», «պատիժ» է համարում: Բայց ամենամեծ պատիժն այն չէ, որ երեխայ Դաւիթը բերում է Մարայմեղքի գլխին. Մարայ քաղաքում, այլ այն, որ նա կուտ է իւր հայրենիքի պաշտպանութեան և անկախութեան համար: Ահա թէ ինչով է հայը հաստակող: Իրաւամբ այդ ժամանակ Մարայմեղքը յանդիմանում է իւր մօրը, որ չթողեց իրեն սպանել քանի դեռ նա երեխայ էր և Մարայ քաղաքում իւր ձեռին. չէ՞ որ այժմ նրա խօսքն ապացուցւում է, որ Դաւիթը հաստակող աղգ է և պատիժ պիտի բերէ իւր գլխին: «Էն օր որ դու թողայիր ես Դաւիթին մորթէի, էս օր էս օյին չէր հանի մեր գլուխ» (9-րդ, 423):

«Հաստակողութեան» էական յատկանիշներից մէկն է թաւիբը, պատիւը, ազնուականի պատիւը, որ վէպն առանձնապէս դնում է Ազնանց տոհմի համար: «Զուռքի Ազնանց ջընս էր, թաւիբով էր, կամաւոր չէր տայ, որ իրա մէրը տանին» (7-րդ, 55

րդ 67): Եւ իրաւ, Դաւիթն աւելի լաւ է համարում մենակ կռուել և մեռնել, քան թէ տեսնել, որ Մարայ մելիքը Սասունից հարկ առնի, կամ Սասնոյ սահմանները կտրի: Էէդ ինձի թրով զարկեց, ըբա ես չգարկեմ»: Եւեմ անցնի ես ըտոր թրի տակով» (3-րդ, 26): Իւրայիւնները բոլորը ենթարկւում են թշնամուն, պատրաստ են նուաւտական հարկերը տալու և արդէն հաւաքել են «երկայն ու կարճ» կանայք, որ գերի պիտի տանեն. արդէն հափում են ոսկին,—բայց Դաւիթը մենակ կողքը պնդացրել է ու չի ուզում հարկ տալ. նա պատրաստ է մենակ կռուի դուրս գալու թշնամիների անհուն բազմութեան դէմ. «Տերթամ, իմ Աստուած կանչեմ, երթամ էռջև դիւշմանին: Յար Երբ ուտի իմ պապու մուլը» (3-րդ, 105. 1-ն, 163):

Սակայն դժբախտաբար ամբողջ ժողովրդի հայեացքը չէ այս, կամ լաւ ասած՝ ամենքից չի պահանջւում այս թասիրը, այլ միայն Ազնանց տոհմից, Ազնանց տան խոյրերից, այսինքն աղանուականներից: Դա հին հայեացք է, որ ազնիւ, պատուաւոր է միայն ազնիւը, այսինքն ազն, ազգ ունեցողը, ազնուականը. ուսմիկ ժողովրդը որ ազնիւ չէ, այսինքն ազգ չունի, նա և ազնիւ, պատուաւոր լինելու վրայ չի էլ մտածում: Դա մեր ժողովրդի զարաւոր ստրկութեան մնացորդն է, ուստի և հաստատող աղգի» արարքները ընդհանուր առմամբ իրերի բնական դրութիւն չի համարւում, այլ դժութիւն, խենթութիւն: Այդ պատճառով և մեր դիւցազնները վէպի մէջ յաճախ «ծուռ», կամ «Սասնու ծուռ» են կոչւում:

Ինչ է նշանակում «ծուռ» բառը:

Ծուռ է նա, որ սովորական ճանապարհից դուրս է գալիս: «Ձէնով Յովան ելաւ դիւրբինը եդի աչիչ, իրիշկեց իւր ճամբախ. իրիշկեց, տեսաւ, որ մէկ փերիդ կը գայ, մէկ տղայ էլ յետևանց կը գայ, ճամբիսէն դիւրս կը քէլի: Ինք իւր կնկան ասաց.— Այ կնիկ, իլի տեղ շինի. մէկ տղայ ծուռ ծուռ ճամբիսէն կը քէլի. ճամբիսէն դիւրս կը գայ. էնիկ մե ծուռ Դաւիթն ի՛ եկաւ» (3-րդ 89): Այստեղ ծուռ բառը գործածուած է իւր իսկական իմաստով. սակայն այդպիսի ծուռութիւնների համար չէ, որ ծուռ է կոչւում Դաւիթը: Վէպի մէջ այդ մականունը արւում է հերոսներին և բարոյական իմաստով, Սասնու դիւցազնները սովորական մարդիկ չեն իրենց արարմունքներով, ուստի և ժողովրդի կարծիքով ծուռ, այսինքն դիժ, խենթ են. նրանց գործերն աւելի դժի վարմունք են, քան թէ խելքը տեղը սովորական մարդու: Ահա այդ «ծուռութիւնները»:

Ծուռ է այն մարդը, որ առանց աջ ու ձախ մտիկ անելու՝

ստի տակ է տալիս և պատժում իրեն դէմ կանգնողին, հակառակողին: Երբ մանուկ Դաւիթը տանում է ցաւաման ժամի հարիսայով լի պղինձը, երէցը կանչում է. «Բո Աստուծու սէր, ձայն մի հանէք. դա Սասուն ծոկերիցն է. կը դառնայ մեզ ջարդ ու բուրդ կանէ» (1-ն, 154):

Մուռ է այն մարդը, որ լեռներում մեծացած, ինքը կտրիճ, հողին պարզ. ոչ մի բանի մասին երկար ու բարակ մտածել չըզիտէ և պատրաստ է ամենայն վիրաւորանքի փոխարէնը հասցնել իսկոյն: Այսպէս՝ Դաւիթը սարում մեծացած լինելով գոմէշ չէր տեսած. դաշտ է իջնում, ուր առաջին անգամ տեսնում է գոմէշ և զազան կարծելով՝ գուրդը քաշում է որ գոմէշին զարկի: Այն կողմից զալիս է հօտազն իւր գոմէշին հայհոյելով. Դաւիթը կարծում է թէ իրեն է հայհոյում և պատրաստ է արդէն վրէժ-խընդիր լինելու, որ հօտազն ասում է. «Բեզ հոտ մի է, եղբայր, դու Սասուն ծծուն ես, դու աշխարհք չե՞ս տեսել: Այսպիսի ծուռն են բոլոր Սասունցիք. շրտանք Սասնու ծոկերն են. մկայ մէկ քամ խօսք կասեն» (1-ն, 150. 167):

Մուռ է և նա, որ թշնամուց չի վախենում. քաջութեամբ կուռն է, և ընդհակառակն ուրիշները նրանից սարսափում են: «Բեզնից փախնող չկայ. ձեռնէդ ինչ զալիս է՝ արա», ասում է Իշխանն Արլաղին և մի այնպիսի հարուած տալիս նրան, որ կարծում է թէ սարն եկաւ իր վրէն: Արլաղն այդ հարուածից իմանում է, որ իւր ոսոխն Ազնանց տոհմից է, իսկ վիպասանն աւելացնում է. «Դրա համար են ասում ընդոնց ջնսին Սասունայ ծոկը» (7-րդ, 53):

«Սասունայ ծուռ Դաւիթն ա, ասում է աւազակապետն իւր ընկերներին,—բարկութիւնը կըրոնայ՝ մեր քառասունին կըսպանի. ընդոցը տուածորիկ է. միննաթ արէք բերէք ըստեղ, որ եօլայ երթանք: Շճեսան որ Սասման ծոկուց է, մէկը էլի բնամ ա էկե. ասին.—գուրբան արեւդ...»

Բերած օրինակներից արդէն պարզ հասկացում է թէ վէպի մէջ ծ ու ռ բառն ինչ իմաստով է գործածւում: Բայց աւելորդ չի լինի՝ այստեղ յիշատակենք հետեւեալն ևս: Երբ մինք 2-րդ պատմուածքի ասացող մոկացուն 1887 թուին հարց ու փորձ էինք անում Սասունցոց այժմեան կացութեան ու բնավորութեան մասին, նա յայտնեց թէ այժմ էլ Սասուն շատ կտրիճ փահլան կայ և թէ Սպիւռնցիք իրենց՝ Մոկացոց ու Մշեցոց պէս չեն. թուրքը նրանց չի կարող նեղել, որովհետեւ նրանք ծուռ են, ոչ մի բանի մտիկ չեն տալ: Եւ Մոկացին պատմում էր իրրեւ ապացոյց իւր տեսածը թէ ինչպէս երկու Սասունցի Բաղիշու բազարում կռիւ են անում

բոլոր թուրքերի հետ: Այդ Սասունցիները, ասում էր, մրգեղէն էին բերել քաղաք ծախելու: Մի թուրք եկաւ, որ վերցնի: Թուրքը որ հայի ապրանքէն վերցնի ախպէս, առանց փողի, հայն ձայն հանել չի կարող: Բայց Սասունցիք չթողին, որ թուրքը վերցնի: Կռիւ ընկաւ, բազարի բոլոր թուրքեր ժողովուեցան, բայց այն երկու Սասունցին թրերը հանեցին ու բոլոր թուրքերին դէմ կանգնեցին ու թուրքերը չկարողացան նրանց բան անել: Այսպէս ծուռ են Սասունցիք: Թուրք չի կարող նրանց մօտենալ, նոյն իսկ եթէ մենակ ճանապարհ գնալիս լինին:

Մուռ է կոչւում, ուրեմն, Սասունցին ընդհանրապէս և Սասունցի դիւցազնը մասնաւորապէս նրա համար, որ իւր անձնական իրաւունքն է պաշտպանում և ոչ թէ ստրկօրէն տանում օտարի հարստահարութեան լուծը: Բայց այդպիսի ծուռ միանգամայն և քաջի, կտրճի նշանակութիւն է ստանում, ինչպէս որ Ք. Պատկանեանը, 1-ն պատմութեան արտասովորածքի բառարանի մէջ, յաջող կերպով թարգմանել է ծուռ բառը թէ իբրեւ խենթ և թէ իբրեւ կտրճ:

Սասունցի լեռնականները հին ժամանակներից աբղէն, ինչպէս տեսանք, ոչ միայն քաջամարտիկ մեկնապէսներ են եղել, այլ և վայրենի են համարուել, շահամբոյրք միմեանց... զազանաբարոյք, արիւնարբիւք, առ ոչինչ համարելով զսպանումն եղբարց հարազատաց. նաև զանձանց ևս, և երևի այդ հին ժամանակներից էլ զալիս է նրանց ծուռ մականունը: Դաշտաբնակ. խաղաղ ու հանգաբարբարոյ ժողովրդի աչքին այդպիսի վայրագները բնականօրէն ծուռ պիտի համարուէին: Դա մի ընդհանուր տարածուած սովորութիւն է, ոչ միայն Հայոց մէջ զանազան կողմերում, այլ և ուրիշ ազգերի մէջ, որ համեմատաբար աւելի քաղաքակրթուած դաշտաբնակները իրենց դրացի բերան լեռնցիներին խենթի տեղ են դնում և նրանց մասին զանազան զուարճալիքներ ու անեկդոտներ պատմում: Անշուշտ սկզբում այս կերպով ծուռ են համարուել սասունցիք իրենց դրացի մշեցիներից. և նրանց վրայ պատմուել են զրոյցների մի ամբողջ շրջան, մինչև որ վէպը Տարօնից Սասուն է փոխադրուած և կազմուած այժմեան Սասնու վէպը, որի մէջ պիտի մտած լինին այդ զրոյցներից մէկը կամ միւսը: Այդպիսիների կարգին ենք համարում վէպի մէջ և՛ դաժ բոլոր զուարճալի բնաւորութիւն կրող զրոյցները և այն, որ Դաւթի միամտութիւնն են ցոյց տալիս. ինչպէս են՝ ուլերը նապաստակներից չտարբերելը, հերիսով լի կաթսան տանելը, զոմէշ տեսնելը և ուրիշ շատերը:

Բայց ինչպէս էլ լինի, վէպի հերոսների ծուռ կոչման մէջ

երևում է մեր ժողովրդի ամբողջ հայեացքը քաջութեան, ազատասիրութեան ու պատուասիրութեան մասին: Քաջութիւնն ու կարճութիւնը ծնութիւն է: մի յատկութիւն, որ կեանքի սովորական ճանապարհից դուրս է: Բարեբախտաբար վէպի մէջ այդ ծնութիւնը արհամարհելի ու նուաստական չէ, այլ սիրելի ու փայփայելի ժողովուրդն իւր գիւցազներին ծուռ է անուանում, ինչպէս մայրն իւր սիրասուն որդուն ծուռ, գիժ տղայ է ասում, երբ նա անհանգիստ ու անգաղար բնաւորութիւն է ցոյց տալիս:

Դաւթի բնաւորութիւնը:—Թէ՛ հրքան ծուռ մականունը մի փազաղական կոչում է, այդ լաւ երևում է այն զաղափարական ազնիւ բնաւորութիւնից, որ ժողովուրդը տուել է իւր մեծ գիւցազներին, ծուռ Դաւթին, որ իւր բոլոր ծնութեամբ հանգերձ՝ շատ սիրելի մի հերոս է: Մենք այստեղ Դաւթի մանրամասն բնութագրեր պիտի չանենք, այլ միայն մի քանի գծեր շեշտենք այս բնաւորութիւնից, որպէս զի պարզ երեւի, որ ծուռ մականունը նուաստական չէ:

Դաւթը յորովայն է կոչեցեալ է իւր Հայոց ազգի տան ճրագը վառ պահելու համար և չթողնելու, որ տաճիկը հայի վրայ զորանայ: Դրա համար և վէպը նրան օժտած է ամենայն առաքինութիւններով: Մարմնով նա զեղեցիկ է, ուժեղ ու ճապուկ. բարձր հասակով, յաղթ անդամներով, պինդ կազմուածքով, հաստաբազուկ և արագոտն,—մի խօսքով՝ մի «անձնահուր», թխամօրուս կամ խարտեաշ (նայելով պատմուածքին), որի վրայ է աշխարհի աչքը, և որին գրաւելու համար աղջկերքն ամեն շնորհք գործ են դնում: Շատերը նրա սիրով վառուում են: Երբ նա Խանդութի հօր առաջ կանգնում է, «թագաւոր, իւր վաքիւ, վաղիր շիւարան Թէ իդամայ էլ մարդ կեղնի» (Յ-րդ, 45): Նա և՛ հոգւով առաքինի է, առաքինի ըստ ամենայն բարեմասնութեան. մի հայրենասէր մարդ, առնական, համարձակ և խիզախ. կտրիճ, քաջ ու անվախ. «էջի Կուղ Բադին, դու գնա, ընկիր չէկ տղի ձեռ, աղէկ կը բերես թալան», ասում են Սասնու ջրբեր կանայք (Յ-րդ, 102): Այս առնական յատկութիւնների հետ ունի և երգի ու նուագի շնորհք: Իբրև զօրեղ բնաւորութիւն՝ խորը զգացուող, հոգու խորքից յուզուող է. երկար ու բարակ դատել չի սիրում, այլ անելի գործել. Թեթև շարժառիթներով բորբոքում է և խկոյն գործի դիմում: Իբրև գործի մարդ՝ տատանում ու վարանում ասածը չգիտէ, արագ իւր վճիռը դնում է և մի անգամ արդէն վրձնածի վրայ անդրդուելի մնում. նրա համար «չեղնելոց բան» է որոշումից կանգնելը: Քաջութեամբ կռիւ է մտնում և մահուան

դիմադրաւ լինում, անձնուէր է, տողում, տանում է ամեն մի նեղութիւն, բայց և միաժամանակ մեզ նման մարդ է, ունի մեր մարդկային կրքերը. իբրև մարդ վախենում է մահից, խորը կերպով զգում իւր անելանելի վիճակը: Իբրև իւր լեռնային երկրի ծնունդ՝ պարզասիրտ ու միամիտ է, աննենգ հոգւով, բաց սրբ-տով. բայց կոշտ ու կռուիտ իւր շարժուածքի ու խօսուածքի մէջ: Սարսափելի կերպով պատժել գիտէ իւր երկրի թշնամիներին, մինչև անգամ բարբարոսական պատիժ տալ, ինչպէս են ատամները հանել կայն, բայց և միաժամանակ վեհանձն է ու ներողա-միտ դէպի թշնամին, բարեսիրտ է և անմեղ. արիւն թափել չէ ուզում. հենց որ զգում է իւր անարդար վարմունքը, իսկոյն բարկու-թիւնից իջնում է, փոշմանում իւր արարքին: Ատում է թշնամի-ներին, բայց և ստոր միջոցներ չէ բանեցնում նրանց յաղթելու համար, գողունի չէ յարձակում, արիւնարբու, վրիժառու չէ: Պաշտպան է անզօրին ու թոյլին. մտածում է իւր երկրի ու ժողովրդի բարօրութեան համար, հալածում է աւազակներին: Քըն-քընութեամբ սիրում է իւր հայրենի երկիրը, իւր ազգականներին, իւր երախտաւորներին, կնոջը, իւր ձեռի տակ ծառայողներին, որոնց բոլորի համար և հոգացողութիւն ունի, և վերջապէս իւր դրացիներին և ամեն դիմացի մարդու: Անընչասէր է վերին աս-տիճանի, նոյն իսկ թշնամու վերաբերմամբ, բայց և իւր հայրենի հարստութիւնը վատնել չէ ուզում: Բարեպաշտ է, եկեղեցասէր, հովանաւորող եկեղեցականների և վանքերի, ամենայն բոլի ա-ղօթքը բերանին ունի, բայց և երբեմն իբրև մարդ մոռանում է իւր աղօթքը. երգմնապահ է, բայց և միանգամ իւր կեանքի մէջ մոռանում է կատարել իւր երգումը, որ և լինում է նրա մեծ յան-ցանքը: Գիտէ զուարթ կեր ու խում անել և մինչև անգամ չա-փից դուրս խմել, գինովանալ, բայց երբէք ինքն իրեն չի կորց-նում. հարկաւոր ժամանակ իսկոյն սթափում է իւր ուրախու-թիւնից և լրջութեամբ գործի դիմում: Ընտանեկան օջախի սրբ-բութիւնը սիրող է, կնոջ պատուի նախանձախնդիր, ողջխոր-հուրդ դուրս է գալիս գեղեցիկ կնոջ լարած թակարթից, բայց և միաժամանակ իբրև մարդ մի անգամ խաբւում է կնոջից: Սէրը նը-րան էլ կուրացնում է, որ սիրոյ ազդեցութեան տակ կատարում է գործեր, որ ուրիշ դէպքում չէր անիլ: Բայց և սիրոյ դէպքում նա գաղափարական է. մինչ ուրիշները իրենց ծնողների ընտրու-թեամբ ու կամքով են պսակում, նա աւելի լաւ է համարում ընդունուած դիրքը խանդարել, նշանը յիտ տալ և իւր սրտի ձայ-նին հետևել: Ամուսնութիւնը նա անձնական ազատ ընտրութեամբ է հասկանում:

Բայց այս առաքինութիւններից՝ Դաւիթն օժտուած է և շատ նահապետական սովորական յատկութիւններով, ինչպէս են՝ յարգանք դէպի ծերերը, խոնարհութիւն, աւանդապահութիւն ընդունուած ծէսերի ու կարգերի վերաբերմամբ, պատկառանք մեծ ազգականներից, հիւրասիրութիւն և այլն:

Մենք եթէ շարունակենք, դեռ կարող ենք շատ բարեմասնութիւններ թուել Դաւթի բնաւորութիւնից: Ստեղծող ժողովուրդը նրա մէջ դրել է մի շատ հարուստ և բազմակողմանի ոգի, և այն՝ ոչ նկարագրելով կամ խօսքերով, այլ ուղղակի գործի մէջ հանդէս բերելով նրա բնաւորութեան ամեն մի գիծը: Արդարեւ կան և ստուերոտ կողմեր, որովհետեւ նա մարդ է մեզ նման. բայց քանի որ այդ ստուերոտ կողմերի համար միշտ պատժուած է հերոսը, շատ պարզ երևում է որ ժողովուրդն իւր բարոյական զաւակներն է ամփոփել Դաւթի մէջ, որ ամբողջութեամբ առած շատ սիրելի անձնաւորութիւն է:

Մենք վերջացրինք: Բայց իբրև վերջաբան աւելորդ չէ ասենք, որ սիրելի պիտի լինի մեզ համար ևս մեր վէպը, որ մերն է, մեր սեպհականը, մեր ազգի դարաւոր պատկերը: Ժողովենք այդ վէպի շատ պատմածքներ, ուսումնասիրենք բազմակողմանի կերպով, և մենք կը գտնենք նրա մէջ մեր ժողովրդի հոգու խորքերը: Իսկ երբ մեր բանաստեղծներից մի հանճարեղը այդ նիւթը նոյն ժողովրդական հոգով մշակէ գեղարուեստօրէն, դա կը լինի մեր ազգային բանաստեղծութեան մարգարիտը: Մի երկու փորձեր եղել են, բայց պէտք է սպասենք կատարելագոյնին, մի երկի, որի մէջ երևան գար մեր ազգի ամբողջ կեանքն ու հոգին, նրա անցեալը, ներկան ու ապագան: Ոչ մի նիւթ այնպէս յարմար չէ այդպիսի մի ընդարձակ բանաստեղծական երկի, որքան մեր «Սասնու ծռերը»: Սրա մէջ կան ամեն սաղմեր, միայն պէտք է անցցնել ու հրաշակերտել արուեստով:

Ե՞րբ պէտք է ծնուի այդ հանճարը, որ խմելով հայրենի կենդանի աղբիւրից, ինչպէս Դաւիթն իւր հայրենական անմահական աղբիւրի ջուրը, մի անզամից անէր, հակայական դառնար, և մեր աղքատիկ գրականութիւնը այդ ուժով ու զօրութեամբ պատուէր ու ճանապարհ բանար ընդհանուր ազգերի գրականութեան ծովի մէջ, ինչպէս Սասնոյ փոքրիկ գետը, որ լեռներից իջնելով՝ դալիս դարկում էր ահագին գետի մէջ, եւ և կը կտրէր զէջ գետ, ու կը շերտէր չուր ի մէջտեղ. ու հըպամ՝ լէ կը խառնուէր մէջ էջ գետին ու կերթէր:

Այդ կը լինի այն ժամանակ և կանէ նա, «Որն որ զրգայ

ջրի ակ գտնէ, ու զիւր տուն լէ սուկէ (շինէ) վըր իդա ջրին՝
այն ժամանակ և բընդրայ աւլադ լէ որ եղնի, հմլայ զօրեղ կեղ-
նիս: Ծիշա է, այդ աղբիւրի ակը փոքր է, չլուլէ մի ջուր էս,
բայց չջուրը զօռայ ջուր էս, այդ բարակ առուն մեծ զօրու-
թիւն ունի և որն որ իդոր ական ջուր խմէ՝ հմալ կտրին կեղ-
նիս, և նա կազատէ մեր գրականութիւնն օտարներէ գերութիւ-
նից, ինչպէս Դաւիթն իւր հայրենի Սասունը:

